
**ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

ԱՍԼԱՆՅԱՆ Ս. Ռ.

1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի և դրա հիման վրա կնքված հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրում տարածքների հարցում Թուրքիայի որդեգրած անգիջում կեցվածքը ձևավորվել էր ավելի վաղ՝ Ռուսաստանի և Հայաստանի հետ կնքած մի շարք պայմանագրերով: Դրանցից էին 1918 թ. մարտի 3-ի Բրեստի, 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի և 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրերը: Թուրքիայի դիրքորոշման ձևավորման գործում կարևոր դեր խաղացին նաև Էրզրումի և Սվազի 1919 թ. կոնգրեսների որոշումները, որոնք հրավիրել էին «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» մեջ միավորված ազգայնականները: Դրանց հիման վրա 1920 թ. հունվարի 26-ին ընդունվեց «Ազգային ուխտը», որի համաձայն՝ թուրքերն իրենցն էին համարում բոլոր՝ այսպես կոչված «թուրքական տարածքները» ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Անդրկովկասում:

Նախկինում կնքվածների հետ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի համեմատությունը չի նշանակում, որ այդ պայմանագրերը կնքելիս մասնակիցների կողմից վկայակոչվել են, և կամ էլ դրանք Մոսկվայի ու Կարսի պայմանագրերն այդ տեսքով կնքելու անհրաժեշտ փուլեր էին: Սակայն 1921 թ. կնքված պայմանագրերի բովանդակությունը պարզաբանելու և թուրքերի անգիջում դիրքորոշումը բացահայտելու առումով այդ համեմատությունը նպատակահարմար է թվում: Բրեստի, Բաթումի, Ալեքսանդրապոլի, ինչպես նաև Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը ոչ այլ ինչ են, եթե ոչ Ռուսաստանի և Հայաստանի անձնատվությունը Թուրքիային:

Ռուսաստան-Հայաստան և Թուրքիա հարաբերություններն այժմ մնում են Մոսկվայի ու Կարսի անարդարացի պայմանագրերի շրջանակներում, մինչդեռ մեր տարածաշրջանում իրավիճակը արմատապես փոխվել է: Ներկայումս գոյություն չունի այդ պայմանագրերը կնքած Խորհրդային Ռուսաստանը, անկախ է Հայաստանը, փոխվել է Ռուսաստանի քաղաքականությունը՝ վերադառնալով ավանդական շահերի ըմբռնմանը: Հետևաբար, պնդելի է, որ այդ հարցն ապագայում կբարձրացվի և Մոսկվայի ու Կարսի չարաբաստիկ պայմանագրերը կվերանայվեն ՀՀ արդիական շահերի համեմատ:

Բրեստի հաշտության պայմանագիրը կնքվել է մի կողմից Խորհրդային Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի ու Թուրքիայի միջև: Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածով և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրով Թուրքիային էին անցնում Արևմտյան Հայաստանը և Կարսի ու Արդահանի մարզերը: Ռուսաստանը պարտավորվում էր իր զորքերն անհապաղ դուրս բերել Արդահանի, Կարսի, Բաթումի մարզերից, ցրել հայկական կամավորական ջոկատները, Կովկասում պահել միայն մեկ դիվիզիա և

ճանաչել 1877 թ. սահմանները: Բանակցությունների ընթացքում Խորհրդային Ռուսաստանի կողմից առաջադրվեցին որոշ սկզբունքներ, այն է՝ թույլ չտալ պատերազմի ժամանակ զավթված տարածքների բռնի միացումը, գրավված տարածքներից զորքերի դուրսբերում, պատերազմի ընթացքում քաղաքական ինքնուրույնությունը կորցրած ժողովուրդների իրավունքների վերականգնում և մինչև պատերազմը քաղաքական ինքնուրույնություն չունեցող ազգային խմբավորումներին հանրաքվեի միջոցով իրենց հետագա ճակատագիրը տնօրինելու երաշխիքի տրամադրում: Դրանք հաշտության դեկրետի, «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայի», ու Ռուսաստանի և Արևելքի մահմեդական աշխատավորներին ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի ուղղած դիմումի հռչակած պարտավորությունների ոգով Հայաստանի հարցը լուծելու հնարավորություններ էին ստեղծում: Սակայն խորհրդային առաջարկները մերժվեցին Գերմանիայի ու նրա դաշնակիցների կողմից¹: Ինչպես այդ կապակցությամբ նկատվել է, «այնպես, ինչպես Թուրքիայի, Ավստրո-Հունգարիայի և Գերմանական կայսրության սահմանադրությունները չէին ճանաչում ճնշված ժողովուրդների անջատվելու կամ ինչ-որ չափով ազգային ինքնավարություն ունենալու իրավունքը, այնպես էլ հայերը, արաբները, հույները և այլ ազգությունները պետք է մնային այն նույն դրության մեջ, որում գտնվում էին մինչև պատերազմը»²:

Խորհրդային Ռուսաստանը «Թուրքահայաստանի մասին» դեկրետն ընդունեց, Բրեստի հաշտության բանակցությունների ժամանակ՝ 1917 թ. դեկտեմբերի 29-ին: Սակայն Բրեստի հաշտության պայմանագրով այն ի չիք էր դարձվում: Ինչպես հայտնի է, այդ պայմանագրում խոսք չկար Հայաստանի մասին: Այնտեղ խոսվում էր այսպես կոչված «արևելաանատոլիական գավառների» մասին: Գերմանական կռալիցիան օգտվեց Ռուսաստանի այն ժամանակվա ծանր դրությունից և խորհրդային իշխանության հռչակած սկզբունքներից՝ շարադրված մասնավորապես 1917 թ. նոյեմբերի 20-ին Ռուսաստանի և Արևելքի մահմեդական աշխատավորներին ուղղված դիմումում: Այնտեղ ասված է, որ «ռուսական հանրապետությունը և նրա կառավարությունը դեմ են օտար տարածքների բռնագրավմանը...: Թուրքիայի բաժանման և նրանից Հայաստանը խլելու վերաբերյալ պայմանագիրը պատռված և ոչնչացված է»: Այնինչ Բրեստի պայմանագիրն անտեսում էր այն ամենը, ինչ վերաբերում էր Հայաստանին³: Թուրքիային էր անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսի մարզը, որը մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը գտնվում էր ռուսական կայսրության կազմում: Նույնը նախատեսված էր նաև Մոսկվայի և Կարսի պայմանագրերով:

¹ Հայկական հարց, Ե., 1996, էջ 89-90:

² **Аветисян Г.**, *Брест-Литовск: как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батуми*, Е., 1994, с. 22.

³ Նույն տեղում, էջ 71:՝

Բրեստի հաշտության պայմանագիրը մի էական հարցում ևս նախորդում էր Մոսկվայի պայմանագրին: Դա երրորդ կողմի անունից և նրա վերաբերյալ կնքված պայմանագիրն էր: Բանն այն է, որ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ձևավորված Անդրկովկասյան կոմիսարիատը (1917 թ. նոյեմբերի 15), ապա սեյմը (1918 թ. փետրվարի 10) չէին ճանաչում խորհրդային իշխանությունը: Ռուսաստանի խորհուրդների IV համագումարում մենշևիկյան խմբակցության անունից հանդես եկող Յու. Մարտովը նշում էր, որ Բրեստում դիվանագետներն իրավունք չունեին գործարք կնքելու Թուրքիային հանձնվող իրենց չպատկանող գավառների մասին, քանի որ «կովկաս-յան խորհուրդները չէին ճանաչում Ժողովրդական կոմիսարների իշխանությունը»⁴:

Բրեստի հաշտության պայմանագրով, ինչպես նշվեց, Ռուսաստանի համար նախատեսվում էին նաև այլ սահմանափակումներ (Կովկասում մեկ դիվիզիայից ավել զորք չունենալու, հայկական կամավորական ջոկատները ցրելու մասին և այլն): Համարյա նույն պայմանները թուրքերն առաջադրեցին նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման ժամանակ:

Բաթումի պայմանագիրը կնքվել է 1918 թ. հունիսի 4-ին Հայաստանի և Թուրքիայի միջև: Այն բաղկացած է 14 հոդվածից: Հայաստանի Հանրապետության տարածքը պարփակվում էր Երևանի գավառի մի մասով և հարակից մի քանի շրջաններով՝ 10-12 հազ. կմ² տարածությամբ, շուրջ մեկ միլիոն բնակչությամբ: Գ. Գալոյանի բնութագրմամբ «այս պայմանագիրը ավելի թալանչիական բնույթի էր, քան Բրեստի պայմանագիրը...: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի՝ Երևանի Հայոց ազգային խորհրդին այս կապակցությամբ հղած նամակում ինքնահանգստացնող այսպիսի խոսքեր կային. «Մեր պատվիրակությանը հաջողվեց մի քիչ լայնացնել մեր բանտի դարպասները...» և հասցնել այն «Երևանի կայարանից յոթ կիլոմետր հեռավորության վրա»⁵: Բաթումի պայմանագրի միակ դրական կողմն այն էր, որ Թուրքիան պաշտոնապես ճանաչում էր անկախ Հայաստանի գոյությունը:

Այս պայմանագիրն ուղղակիորեն բխում էր Բրեստի պայմանագրից: Բաթումի պայմանագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ Բրեստի պայմանագրի բոլոր այն հոդվածները, որոնք չէին հակասում Բաթումի պայմանագրին, մնում էին ուժի մեջ: Ինչպես Բրեստի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը, այնպես էլ Բաթումինը թուրքական զավթիչների պարտադրած ակտ էր: Բաթումի պայմանագրով Հայաստանը կախման մեջ էր ընկնում Թուրքիայից: Պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսվում էր Հայաստանի Հանրապետության խնդրանքով Թուրքիայի ռազմական օգնությունը՝ «երկրի ներսում կարգն ու կանոնը պահպանելու համար»: Հեղափոխական շարժումների դեմ ուղղված այս հոդվածը Թուրքիային հնարավորություն էր ընձեռում ցանկացած առիթն օգտագործել Հայաստանը

⁴ *Стенографический отчет IV Чрезвычайного съезда Советов рабочих, солдатских, крестьянских и казачьих депутатов, М., 1920, с. 33-34.*

⁵ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, էջ 30-31:

բռնագավթելու համար⁶։ Թուրքիայից կախվածության մեջ ընկնելու այս հանգամանքն առավել շեշտված է Ալեքսանդրապոլի պայմանագրում։

Բաթումի պայմանագրի 5-րդ հոդվածը, որով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր թույլ չտալ իր տարածքում հակաթուրքական զինված խմբերի գոյությունը, տեղ գտավ Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածում։ Դրա համաձայն, «Պայմանավորվող երկու կողմերը պարտավորվում են իրենց տերիտորիաներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կամ նրա տերիտորիայի մի մասի կառավարման դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև պարտավորվում է իրեն տերիտորիայում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ...»⁷։

Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը բաղկացած է 18 հոդվածից։ Այն պարտադրվեց Հայաստանի մի զգալի տարածքի թուրքական բռնագավթման պայմաններում։ Մինչև վերջերս ընդունված էր այն տեսակետը, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի տարածքը 10 հազ. քառ. կմ էր⁸, սակայն դա չի համապատասխանում իրականությանը։ Ինչպես նշում է Բ. Հարությունյանը, «զարմանալիորեն մեծ նմանություն կա Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի և Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրերի միջև»⁹։ Իսկ Ս. Վրացյանը նշում է, որ «1921 թ. մարտի 16-ի բարեկամության և եղբայրական դաշնագրությունը Հայաստանի համար անհամեմատ ավելի ծանր պայմաններ էր նախատեսում, քան նույնիսկ Ալեքսանդրապոլի դաշնագիրը։ Այսպես, Ալեքսանդրապոլի դաշնագրով Կարսի նահանգը և Սուրմալուն համարվում էին վիճելի մինչև երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարությունը կարող է հայտարարել հանրաքվե՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների։ Մոսկվայի պայմանագրով այդ նահանգները վերջնականապես և առանց պայմանի հանձնվում էին Թուրքիային։ Ալեքսանդրապոլի պայմանագրով Շարուրը և Նախիջևանը ժամանակավորապես օժտվում էին ինքնավարությամբ՝ գտնվելով Թուրքիայի հովանավորության տակ, մինչև որ որոշվի նրանց բախտը։ Մոսկվայի պայմանագրով Շարուրն ու Նախիջևանը հանձնվում էին Ադրբեջանին, և այս վերջինը իրավունք չուներ փոխանցելու մի երրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին»¹⁰։ Պետք է նշել, որ Ս. Վրացյանը թույլ է տալիս որոշ անճշտություններ։ Նախ՝ Ալեքսանդրապոլի պայմանագրով երեք տարի ժամկետ չէր սահմանվում և հետո՝ հանրաքվե կարող էր անցկացնել ոչ թե Հայաստանը, այլ Թուրքիան¹¹։

⁶ Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ. 1, Ե., 1990, էջ 451։

⁷ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972, էջ 502։

⁸ Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ. 1, էջ 83։

⁹ Գիտության գլոբուս, 2001, №1, էջ 72։

¹⁰ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 556։

¹¹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 391։

Սակայն առանց այս տարածքների հաշվառման էլ Մոսկվայի պայմանագիրը զիջում էր Ալեքսանդրապոլի պայմանագրին: Ինչպես ճիշտ նկատել է Բ. Հարությունյանը, Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի և Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով նախատեսված սահմանների համեմատական քննությունը, ցավոք, չի խոսում հոգուտ վերջինիս: Հայաստանի Հանրապետության հյուսիսարևմտյան սահմանագիծը Մոսկվայի պայմանագրով զգալիորեն տեղափոխվել է արևելք, և Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված շուրջ 250 քառ. կմ տարածք, որ պետք է մնար Հայաստանի Հանրապետությանը, անցել է Թուրքիային և, փաստորեն, Մոսկվայի պայմանագիրը որպես հիմք ընդունում է Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսվածը¹²:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 10-րդ և 14-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանը պարտավորվում էր անվավեր ճանաչել բոլոր այն պայմանագրերի դրույթները, որոնք վերաբերում էին Թուրքիային ու Հայաստանին և վնասում էին Թուրքիայի շահերին: Դա նախ և առաջ վերաբերում էր Սևրի պայմանագրին: Այս հոդվածը 1921 թ. մտցվեց Մոսկվայի (հոդված 1) և Կարսի (հոդված 2) պայմանագրերի մեջ:

1921 թ. աշնանը թուրքական մամուլում, մեկնաբանելով խորհրդային հանրապետությունների հետ բանակցությունների արդյունքները, նշվում էր. «Մեր արևելյան սահմանները գծված են մեր սրով»¹³: Նկատի էր առնվում 1920 թ. սեպտեմբեր-նոյեմբերին Հայաստանի Հանրապետության մի զգալի մասի բռնագրավումը Թուրքիայի կողմից: Այդ հաղթական պատերազմի արդյունքն էր համարվում Մոսկվայի և Կարսի պայմանագրերում ամրագրված՝ թուրքերին խիստ ձեռնտու սահմանագծերը:

Սակայն միջազգային իրավունքի տեսակետից այդ բռնագավթումն անվավեր է, քանի որ ըստ միջազգային իրավունքի խորհրդային դոկտրինայի ներկայացուցիչների՝ նոր միջազգային իրավունքը սկզբնավորվել է 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությամբ: Իսկ համաձայն միջազգային իրավունքի արևմտյան դոկտրինայի շատ ներկայացուցիչների՝ նոր միջազգային իրավունքի սկիզբ հարկավոր է համարել 1919 թ. Ազգերի լիգայի ստեղծումը: Այսպիսով, երկու դեպքում էլ նոր միջազգային իրավունքի սկիզբը համարվում են 1920 թ. թուրք-հայկական պատերազմին նախորդած տարեթվերը:

Ժամանակակից միջազգային իրավունքից հին (դասական) միջազգային իրավունքի հիմնական տարբերությունն ուժ կամ ուժի կիրառման սպառնալիքի արգելման առկայությունն է, առաջինում այն դեպքում, երբ հին միջազգային իրավունքում գոյություն ունեւ պատերազմի իրավունքը, *jus ad bellum*¹⁴: Բացի այդ, «հին միջազգային իրավունքով պետությունն իրավունք ունեւ իր իրավունքների խախտման կամ նույնիսկ վեճի առկայության դեպքում իր պահանջների բավարարմանը հասնելու նպատակով դիմել զինված ուժի: Ժամանակակից

¹² Գիտության գլոբուս, 2001, № 1, էջ 72:

¹³ *Армянский вестник*, 1998, № 3-4, с. 157.

¹⁴ *Международное право: советский и английский подходы*, М., 1989, с. 15.

միջազգային իրավունքով ցանկացած իրավախախտմանն ի պատասխան ձեռնարկված միջոցները, բացի հարձակումից, պետք է բացառեն ոչ միայն զինված ուժի, այն դրա կիրառման սպառնալիքին դիմելը»¹⁵։ Ինչպես նշում է անգլիացի միջազգայնագետ Մաքսեյրը, ուժ չկիրառելու սկզբունքի ձևավորման առաջին փուլը 1919 թ. ընդունված Ազգերի լիգայի կանոնադրությունն էր, որը սահմանափակումներ մտցրեց պատերազմի կամ նրա սպառնալիքին դիմելու հարցում¹⁶։

«Ժամանակակից միջազգային իրավունք» տերմինն օգտագործվում էր դեռևս XIX դ. գրականության մեջ՝ բնորոշելու համար գործող միջազգային իրավունքի ժամանակագրական շրջանակները։ Հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում «Ժամանակակից միջազգային իրավունք» հասկացությունը, Ֆ. Կոմենիկովի բնութագրմամբ, սկսեց արտահայտել միջազգային իրավունքի նոր սոցիալական էությունը և նշանակությունը¹⁷։

«Միջազգային իրավունքի դասընթացի» առաջին հատորում համապատասխան պարագրաֆը վերնագրված է «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը շրջադարձային կետ է միջազգային իրավունքի պատմության մեջ»¹⁸։ Բնարկե, Հոկտեմբերյան հեղափոխությունը հին միջազգային իրավունքը չէր կարող փոխարինել նորով, քանի որ միջազգային իրավունքը ձևավորվում է պետությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա։ Սակայն, եթե հաշվի առնենք, որ հեղափոխությունը հանգեցրեց ամբողջ աշխարհում ընդհանուր իրավիճակի արմատական փոփոխությանը, ապա պարզ է դառնում, թե հին միջազգային իրավունքի վերափոխումը նորի ինչու է սկսվում այդ շրջանից¹⁹։

Ընդ որում, շատ միջազգայնագետներ ներկայումս էլ ընդգծում են Հոկտեմբերյան հեղափոխության կարևորագույն դերը ժամանակակից միջազգային իրավունքի կազմավորման գործում²⁰։ Ազգերի լիգայի կանոնադրության ներածությունում գրված է, որ ժողովուրդների միջև համագործակցության զարգացման, նրանց միջև խաղաղության և անվտանգության համար կարևոր է ընդունել որոշ պարտավորություններ, չդիմել պատերազմի²¹։ Այդ նպատակով կանոնադրության 10-րդ հոդվածը նշում էր որոշ պարտավորություններ, որոնց համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են հարգել և ցանկացած արտաքին հարձակումներից պահպանել անդամ պետությունների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը²²։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ Մեջբերված է ըստ **Брунли Я.**, *Принцип неприменения силы в современном международном праве* (Международное право: советский и английский подходы, с. 8).

¹⁷ *Международное право*, М., 1966, с. 25.

¹⁸ *Курс международного права*, т. 1, М., 1989, с. 66.

¹⁹ Նույն տեղում, էջ 67։

²⁰ St' u *Международное право*, М., 1994, с. 43-48; *Международное публичное право*, М., 1999, с. 39-40; *Международное право*, М., 1999, с. 39-40; *Международное право*, М., 2000, с. 34-35։

²¹ *Версальский мирный договор*, М., 1925, с. 7.

²² Նույն տեղում, էջ 9-10։

Չնայած Հայաստանի Առաջին հանրապետությունն այդպես էլ չդարձավ Ազգերի լիգայի անդամ, դրա կանոնադրության 11-րդ հոդվածի համաձայն, «Որևէ պատերազմ կամ պատերազմի սպառնալիք շոշափում է այն ուղղակիորեն կամ ոչ Լիգայի անդամներից որևէ մեկին, հետաքրքրում է Լիգային ամբողջությամբ, և որ վերջինս պետք է միջոցներ ձեռնարկի, որոնք ընդունակ են գործնականում ապահովելու ազգերի խաղաղությունը»²³:

Ազգերի լիգայում 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում Հայաստանի հարցի քննարկումն ի վերջո հանգեց նրան, որ ապարդյուն ժամանակ ծախսելուց հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 16-ին, ընդունվեց բանաձև, որով ԱՄՆ-ը պատրաստակամություն էր հայտնում հայ ժողովրդին փրկելու և Հայաստանում կայունությունն ապահովելու ջանք գործադրելու: Սակայն այդ բանաձևն ընդունվում էր այն ժամանակ, երբ Հայաստանի Առաջին հանրապետությունն արդեն գոյություն չուներ²⁴:

Ազգերի լիգայի կանոնադրության 20-րդ հոդվածն արգելում էր ուժ կամ ուժի կիրառման սպառնալիքի միջոցով պայմանագրերի պարտադրումը: Այն սահմանում է, որ «Լիգայի անդամներն ընդունում են, որ ներկա ստատուսը չեղյալ է հայտարարում բոլոր *inter se* (փոխադարձ- Ս. Ա.) պարտավորությունները և համաձայնագրերը, որոնք անհամատեղելի են նրա պայմաններին և հանդիսավորապես պարտավորվում են այդպիսիները հետագայում չկնքել»²⁵: Այս հոդվածը վերաբերում է նաև Մոսկվայի ու Կարսի պայմանագրերին, որոնցով երկու պետություններ՝ Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, որոշեցին երրորդ պետության՝ Խորհրդային Հայաստանի սահմանները²⁶:

Լոզանի պայմանագիրը կնքվել է 1923 թ. հուլիսի 24-ին մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Ռումինիայի, Սերբո-Խորվաթ-Սլովենյան պետության, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի միջև: Արևելյան հարցը, որը շարունակ տեղիք էր տվել պատերազմների ու դիվանագիտական շահարկումների, Լոզանի կոնֆերանսում վերջապես լուծվեց, սակայն նրա բաղկացուցիչ մասը՝ Հայկական հարցը, դեռևս մնում է չլուծված: Ինչպես նշում է Շ. Թորիկյանը, «Լոզանը լուծում չբերավ Հայկական հարցին, այլ թողեց զայն անլույծ հարցերու կարգին: Ուրեմն, Հայկական հարցի անկյունքն դիտած, Լոզանը չփոխարինեց Սևրը, և այս վերջինը կը մնայ միջազգային համաձայնության արժանացած Հայկական հարցի լուծման միակ բանաձևը»²⁷: Թեև Լոզանի պայմանագրի մի շարք հոդվածներ վերաբերում էին հայ ժողովրդին (փոքրամասնությունների պաշտպանություն և այլն), սակայն Հայաստանի

²³ Նույն տեղում, էջ 10:

²⁴ Հայկական հարց, էջ 18:

²⁵ *Версальский мирный договор*, с. 13.

²⁶ **Барсегов Ю. Г.**, *Арбитражное решение президента США по Армяно-Турецкой границе: политический и международно-правовой комментарий*, Е., 1995, с. 18.

²⁷ **Թորիկյան Շ.**, Ներածական Ա. Խատիսյանի «ՀՀ ծագումն ու զարգացումը» գրքի համար, Բեյրութ, 1968, էջ 8:

տարածքային հարցերը չլուծվեցին: Ազգային օջախի հարցը, որը Դաշնակիցները նախապես պլանավորել էին, այդպես էլ չլուծված մնաց: Թուրքական պատվիրակությունն առարկում էր Ազգային օջախի ստեղծմանը, նշելով, որ Թուրքիան միջազգային իրավունքին համապատասխան՝ պայմանագիր է կնքել (նկատի էր առնվում Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերը) և «բարիդրացիական հարաբերություններ» հաստատել ներկայումս գոյություն ունեցող «անկախ Հայաստանի», այսինքն՝ ՀԽՍՀ-ի հետ, և դրան հակառակ կլինեի պատկերացնել որևէ «այլ Հայաստանի գոյությունը»²⁸:

Սակայն ուշագրավ է, որ Լոզանի պայմանագիրը, մանրամասն որոշելով Բուլղարիայի, Հունաստանի, Սիրիայի, Իրաքի և այլ պետությունների հետ Թուրքիայի սահմանները, այդպես էլ չանդրադարձավ Թուրքիայի և Խորհրդային Միության (այսինքն՝ ՀԽՍՀ-ի) սահմաններին: Այսպիսով, եվրոպական պետությունները գիտակցորեն հետաձգում էին Հայկական հարցի լուծումը, գտնելով, որ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերը միջանկյալ փուլեր են, և Հայկական հարցը, ըստ էության, մնում է չլուծված: Այդ է վկայում Ա. Ահարոնյանի զեկուցումը Լոզանի խորհրդաժողովին. «Տաճիկները այդ սոսկալի եղելությունը (հայկական հողերի բռնագրավումը, գաղթականությունը և այլն-Ս. Ա.) կարդարացնեն այն դաշնագրով, որ ստորագրուեցավ Կարսի մեջ 1921 թ. հոկտեմբերի 13-ին: Իրապես միայն այդ մեկ դաշնագիրը չէ, այլ չորս դաշնագիր՝ Բրեստ-Լիտովսկի (1918 թ.), Բաթումի (1918 թ.), Ալեքսանդրապոլի (1920 թ.) և Կարսի (1921 թ.) դաշնագրերը: Վերջին երեքը Բրեստ-Լիտովսկի կրկնություններն են, բոլորն ալ մեզմե պիտի խլեին վերոհիշյալ հողամասերը:

Մուղղոսի զինադադարով Բրեստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերը ոչնչացան, Ալեքսանդրապոլի՝ 1921 թ. Լոնդոնի մեջ կայացած դաշնակիցներու խորհրդաժողովը չեղյալ համարեց: Իսկ ինչը կը վերաբերի Կարսի դաշնագրին, ոչ ոք մեծ պետություններեն չուզեց ճանաչել անոր գոյությունը:

Տաճիկները կըսեն նաև, որ այդ բոլոր գավառները իրենց կը պատկանէին դեռ ռուս-թուրքական պատերազմեն առաջ (1877թ.), բայց եթե այդպես դատենք, այն ժամանակ այդ շրջանին Բուլղարիան ալ Տաճկաստանին կը պատկանէր, և եթե անոնք այդպես հեռու երթան, ուր պիտի հասցնեն արդյոք իրենց տիրապետության իրավունքները»²⁹:

Բացի այդ, ըստ Շ. Թորիկյանի, «Լոզանի դաշնագրին ստորագրությունը կը խախտեր Միջազգային Օրենքի «բարի կամեցողության» սկզբունքը, որովհետև նույն ստորագիրները (բացառությամբ Հայաստանի, որ կողմ էր Լոզանի դաշնագրին՝ պարագային) նախապես ստորագրած էին ուրիշ դաշնագիր մը, Սևրի դաշնագիրը՝ տարբեր տրամադրություններով: Նախապես ստորագրված դաշնագրին

²⁸ Հայկական հարց, էջ 162:

²⁹ **Լազեյան Գ.**, Հայաստան և Հայ Դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Ե., 1991, էջ 301-302:

տրամադրությունները ձախողության մատնված էին նոր դաշնագրին ստորագրությամբ:

Նույնպես կարելի չէ ըսել, որ Լոզանի Դաշնագիրը կը փոխարինէ կամ յավելում մը կը բերէ Սերի Դաշնագրին վրայ, որովհետև ստորագիր կողմերը նույնը չէին»³⁰:

Այսպիսով, Լոզանի պայմանագրի, Հայկական հարցի տեսանկյունից, հարկավոր է ընդունել որպէս *modus vivendi*, այսինքն՝ ժամանակավոր համաձայնագիր: Այն ապագայում պետք է փոխարինել այնպիսի պայմանագրով, որն արդարացի լուծում կտա Հայկական հարցին:

К СРАВНИТЕЛЬНОМУ АНАЛИЗУ МОСКОВСКОГО И КАРССКОГО ДОГОВОРОВ

АСЛАНЯН С. Р.

Резюме

Как свидетельствует анализ заключенных в XX в. договоров, Московский русско-турецкий и Карсский турецко-закавказский договора 1921г. есть прямое отражение традиционно непримиримой позиции Турции в отношении армянских территорий в предшествующий их подписанию период, как-то: Брестского мирного договора от 3 марта 1918г., Батумского договора от 4 июня того же года и Александропольского договора от 2 декабря 1920г.

В последнем случае, по всей вероятности, немалое значение имело принятие в 1919 г. Устава Лиги Наций, который ограничивал право государств на ведение войн и запрещал принуждение к подписанию договоров путем применения силы или ее угрозы.

В настоящее время положение коренным образом изменилось – нет более подписавшего Московский договор государства Советская Россия, а Армения стала независимой. В этих условиях вопрос о денонсации статей Московского и Карсского договоров, касающихся территориальных уступок, может стать так или иначе предметом рассмотрения.

³⁰ Թորիկյան Շ., Հայկական Հարցը և միջազգային օրենքը, Պեյրուք, 1976, էջ 135-136: